Չատագովողէ մեռցի աւազակն, արիւն աւազակին մի՛ խնդրեսցի 'ի Չատագովողէ։

ԳԼՈՒԽ ՃՂԲ.

Ամենայն ոք որ ձեռս 'ի վեր կալցի և իշխեսցէ և հարկանեսցէ ումեք, և կամ վիրաւորեսցէ, հատուցանել պարտ է պարտս գիշատող ինքնակալութեան իւրոյ այսպէս.

Հարկանողն եթէ հսկայ է և բարկացող մտցի ի բանտ մինչև մեղմասցի և խոնարհեսցի։

Եթէ հարուստ է հատուցանէ տոկոս անիրաւ գանձոց իւրոց զի իջցէ հպարտութենէ։

Եթէ իշխանազուն և փառասէր է հարկանելով գան հայրցի նմայ հռչակաւոր տեղի։

Եթէ աղքատ է և անկարգութենէ գոյացեալ 'ի բնական եռացմանէ արենէ, ընդունեսցի 'ի վերայ իւր զի ստանասցէ 'ի ձեռանէ առն յայնմիկ գանս նման նմի որպէս յինքն եհար նմայ։

ԳԼՈՒԽ ՃՂԳ.

Քահանայ լուծեալ 'ի կարգէն և մտեալ 'ի կարգ աշխարհականաց, մի՛ գտցի շնորհ և կամ շուք ոչ ոք պաշտման։

ԳԼՈՒԽ ՃՂԴ.

Թուղթ պարտուց 'ի կնոջ ամուսնացելոյ տուեալ առ այլ անարժան է։